պահապան զօրս, մինչ ցաւարտումն չինուածոյն, և 'ի լինել դատաստանի յայտնեսցին յանցաւորքն։ Լուեալ Հայոց զմեծարանութիւնս նորին, ազգ արարին Դատաւորին, և նա առաքեաց առ նա զմին 'ի պաշտօնէից իւրոց հանել զզօրս 'ի տաճարէն, զի չէր վնաս ինչ յերկուստեքէ, եւ մնալ թէ ուր կայանայ խնդիրն։ Ի վաղիւ անդր բացաւ դուռն և դնացին անդ քննել զվէճն և սահմանել· զկնի բազում բանից իբրեւ տեսին Հայք թէ անհնարին է Յունաց թողուլ զայն կամար բոլորովին, ակամայ կամօք հաճեցան լինիլ բաժանորդ, և կախեցին զկէս շար և 'ի վերայ նորա կանթեղք 3· կախեցին և Յոյնք կէս շար՝ նոյնպէս 'ի վերայ նորա կանթեղք 3, և մնաց այնպէս։

Իսկ Քաղաքապետն ոխացեալ ընդ Հայս՝ սպասէր դիպող ժամու դաւաճանել զնոսա· Հայք զխաչկալս խորանին և զայլ կարեւոր իրս Վերնատան չեւ եւս էին պատրաստեալ, նմին իրի խնդրեցին 'ի Դատաւորէն և 'ի գործակալաց, 'ի պատրաստելն դնել զայնս 'ի տեղիս իւրեանց անարգել, և նոքա յանձն առին և ետուն հրաման, փակեցաւ դուռն։

ԳԼՈՒԽ Լ.

Խնդիր Ս· Աստուածածնի և Ս· Ծննդեան։ Արգելումն գործոյն Հայոց 'ի կողմանէ Կուսակալին։ Գիր Նաւրի Էֆենտեայ։ Մեկնիլ յԵրուսաղէմէ Խոճաքեանին, Շարտարապետին և Ոսիկանի Կուսակալին։ Սարգիս և Դիոնէսիոս վարդապետաց երթալ 'ի կոչ Կուսակալին։

ՅԵՏ կատարելոյ զայսոսիկ 'ի տաճարին Ս· Յարութեան, Հայք եւ գործակալք առաջի եդին Դատաւորին սկիզբն առնել գործոց Ծննդեան և Ս· Աստուածածնի· և նա ասէ՝ աղաչեցին զիս Յոյնք սպասել մինչեւ առնուլ լուր ինչ 'ի Դամասկոսէ, զի վասն այն առաքեալ են ըզ-Սախարեայն։ Տարակուսեալ Հայոց 'ի վերայ այսր բանի, ասեն՝ կատարեա՛ դու գիտութեամբ ամենեցուն զոր խոստացարդ, և 'ի գալստեան հրամանի Կուսակալին յայնժամ